

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՔՍԱՅԻՆ
 ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ 2011-2013 ԹԹ.**

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Կատարման վերջնա-ժամկետը	Ծանոթություն
	1	2	3	4
I. Մաքսային վարչարարության արդիականացում				
1.	ԵՄ չափանիշներին մաքսային օրենսդրության համապատասխանեցում	Մաքսային օրենսդրության շարունակական կատարելագործում և համապատասխանեցում ԵՄ չափանիշներին	2012թ. և շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	Մաքսային ձևակերպումների ժամանակ փաստաթղթաշրջանառության գործընթացի պարզեցում	Մաքսային տեսուչ-USԳ մասնակիցների շփումների կրճատում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
3.	Մաքսային վարչարարության կատարելագործում, մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում	ԵՄ չափանիշներին համապատասխան մաքսային ձևակերպումների համար պահանջվող ժամանակահատվածի	2011թ. և շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում

		ապահովում		
4.	Կանաչ ուղու ամբողջական կիրառման համակարգի ներդրում, ինքնահայտարարագրման համակարգի ընդլայնում և մաքսային միջնորդի ինստիտուտի զարգացում	Մաքսային վարչարարության արդիականացում և արդյունավետության բարձրացում	2011թ. և շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
5.	Բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների ինստիտուտի ներդրում և նրանց համար պարզեցված ընթացակարգերի սահմանում	Բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ մաքսային վարչարարության առավել պարզեցված ընթացակարգերի կիրառում	2012թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
6.	Եվրամիությանն ինտեգրման շրջանակներում՝ բարեփոխումների ծրագրի միջոցառումներից բխող գործողությունների ժամանակացույցի մշակում	Ծրագրով սահմանված միջոցառումների իրագործման ապահովում	ծրագրի հաստատումից հետո՝ մեկամսյա ժամկետում	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
7.	ՀՀ ԿԱ ՊԵԿ (մաքսային) վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. եռամսյա ծրագրի մշակում	Առաջիկա երեք տարիներին մաքսային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունների սահմանում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
8.	Մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում	Մաքսային մարմնում կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելում, մաքսային ծառայողների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ապահովում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
9.	Մաքսային մարմնի ղեկավարի՝ մաքսային մարմնի առաքելությունների, ծրագրերի և խնդիրների վերաբերյալ ամենամսյա ուղերձների հրապարակում	Գործարար հանրության իրազեկում՝ մաքսային վարչարարության զարգացումների վերաբերյալ	յուրաքանչյուր տարի	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
II. Պետական սահմանի համալիր կառավարման համակարգի ներդրում				

10.	Պետական սահմանում մաքսային ընթացակարգերի ավտոմատացում՝ էլեկտրոնային տեխնոլոգիական համակարգի կիրառմամբ	Մաքսային վարչարարության կատարելագործում	2011-2013թթ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավում
11.	Միջազգային և ԵՄ չափանիշների ու արդյունավետ փորձի ուսումնասիրության հիման վրա պետական սահմանի անցակետերում «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրում՝ բացառելով գործառույթների կրկնությունները, ոչ անհրաժեշտ կամ կրկնակի վերահսկողության կամ հսկողության իրականացումը	Սահմանային գերատեսչական ընթացակարգերի միասնականացում, գործունեության արդյունավետության բարձրացում	2013թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
12.	Պետական սահմանի բոլոր անցակետերում գործող մաքսային մարմինների աշխատակիցների կողմից սահմանը հատող անձանց նկատմամբ էթիկայի բարձր նորմերին համապատասխան վարքագծի և բարեկիրթ վերաբերմունքի պահպանում	Մաքսային աշխատակցի ազնիվ գործելաճի ապահովում, մասնագիտական վարկանիշի բարձրացում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
III. Մաքսային ծառայության կադրային քաղաքականության արդյունավետության բարձրացում				
13.	Մաքսային ծառայողների վերապատրաստման, պարբերական դասընթացների կազմակերպում, այդ թվում՝ «աշխատանքից չկտրված» ծրագրերի իրականացում՝ էլեկտրոնային և գործառույթային առանձնահատկություններից,	Մաքսային ծառայողների վերապատրաստում՝ մաքսային մարմինների համալրում որակյալ կադրերով	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային

	ինչպես նաև ԵՄ առաջատար փորձից			ռեսուրսների ներգրավում
14.	Երկարաժամկետ ուսումնական միջոցառումների կազմակերպման համար մաքսային ծառայությանը կից ուսումնական կենտրոնի ստեղծում	Մաքսային ծառայողների վերապատրաստում, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացում	2012թ.	պահանջվում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
15.	Օտարերկրյա պետությունների մաքսային ուսումնական առաջատար հաստատությունների հետ կադրերի պատրաստման և վերապատրաստման ոլորտներում համագործակցության իրականացում	Մաքսային ծառայողների մասնագիտական ունակությունների, որակավորման աստիճանի բարձրացում, միջազգային մաքսային ուսումնական համակարգին ինտեգրում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
IV. Մաքսային հսկողության համակարգի կատարելագործում				
16.	Մաքսային հսկողության ռիսկերի գնահատման և կանխատեսումների իրականացման կարողությունների զարգացում, առավել ռիսկային ոլորտների բացահայտում և դրանցով պայմանավորված ԵՄ չափանիշների ու արդյունավետ փորձի հիման վրա անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում	Մաքսային վարչարարության գործառույթների և գործունեության արդյունավետության բարձրացում	2011-2012թթ.	միջոցառումը ենթադրում է արտաքին տեխնիկական օժանդակություն
17.	Մաքսային հսկողության ընթացքում ռիսկերի կառավարման բնագավառում տեղեկատվական	Մաքսային ընթացակարգերի մոնիթորինգի, վերահսկման և դրա արդյունքում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է

	ավտոմատ համակարգի ընդլայնում և զարգացում	բացահայտված ռիսկերի վերլուծության և գնահատման համակարգի ձևավորում		արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
18.	Նախաբացթողումային և հետբացթողումային մաքսային հսկողության համակարգի զարգացում և կատարելագործում	Մաքսային հսկողության գործառույթների և գործունեության արդյունավետության բարձրացում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
19.	Մաքսային հսկողության գործընթացի կազմակերպման ԵՄ լավագույն փորձի ուսումնասիրում և դրա հիման վրա առաջարկությունների մշակում և ներդրում	Հսկողության կազմակերպման բնագավառում միջազգային փորձի կիրառում	2011թ. և շարունակական	ֆինանսավորում չի պահանջվում
20.	Մաքսային ծառայությանը կից փակ մաքսային պահեստի ստեղծում	Մաքսային կրկնակի հսկողության իրականացում մասնագիտացված վայրում, մաքսային կանոնների խախտմամբ ապրանքների պահպանում	2012թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավում
21.	Ռիսկային ապրանքների դասակարգման և փորձաքննության նպատակով մաքսային լաբորատորիաների ստեղծում	Ռիսկային ապրանքների ճիշտ դասակարգման արդյունքում մաքսային վճարների ավելացում	2012թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային

				ռեսուրսների ներգրավում
22.	Բոլոր սահմանային մաքսային կետերում բեռնարկղային հրապարակների ստեղծում	Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում, արդյունավետ մաքսային հսկողության իրականացում	2012թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավում
23.	Մաքսային տարածքում տրանսպորտային միջոցների տեղաշարժի հսկողության համակարգի ներդրում, որով հսկողություն կսահմանվի հանրապետության տարածքով տեղաշարժվող, մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցների նկատմամբ	Ռիսկային փոխադրումների օպերատիվ հայտնաբերման արդյունքում մաքսային հսկողության արդյունավետության աճ	2013թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
24.	Ռիսկային ապրանքների առանձնացում, այդ ապրանքների մաքսային հսկողության մեխանիզմների կատարելագործում	Ռիսկերի գնահատման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ապահովում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
V. Մաքսային բնագավառի հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի ուժեղացում				
25.	Մաքսային բնագավառի հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների համար պատասխանատվության նորմերի կիրառման պրակտիկայի ու արդյունավետության ուսումնասիրում, անհրաժեշտությունից ելնելով՝ պատասխանատվության միջոցների վերաբերյալ	Մաքսային բնագավառի հանցագործությունների և մաքսային կանոնների խախտումների համար պատասխանատվության միջոցների վերաբերյալ համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացում	2011թ. և շարունակական	ֆինանսավորում չի պահանջվում

	առաջարկությունների ներկայացում			
26.	Մաքսանենգության և մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի ոլորտում ԵՄ պրակտիկայի ուսումնասիրում և լավագույն փորձի ներդրում	Մաքսային հանցավորության դեմ պայքարի ուժեղացում	2012թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
27.	ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական բնույթի հանցագործություններին վերաբերող մի շարք հոդվածներում քրեական պատժամիջոցներին զուգահեռ այլընտրանքային (ֆինանսական) պատասխանատվության միջոցների կիրառման ուսումնասիրություն և համապատասխան օրինագծի մշակում	Քրեական բնույթի տնտեսական հանցագործությունների ժամանակ պետական բյուջեի շահերին պատճառված վնասի հատուցման մեխանիզմի սահմանում	2011թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
28.	Մաքսային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վերհանելու և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդների և ընթացակարգերի համակարգի ներդրում	Մաքսային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմի վերհանման և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և ներքին գործերի և (կամ) քննություն իրականացնող այլ մարմինների հետ համատեղ ընթացակարգերի սահմանում	2011-2013թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
29.	Մաքսանենգության և մաքսային կանոնների խախտումների դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործման նպատակով ժամանակակից սարքավորումների ձեռքբերում	Մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում

30.	Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների, թունավոր կամ վտանգավոր նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, այդ գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ ստացված տեղեկատվությունն իրավասու մարմիններին օպերատիվ տրամադրելու գործընթացի ապահովում	Թմրամուլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի արդյունավետ իրականացում	2011-2013թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
31.	Մաքսային ծառայությունում կինոլոգիական կենտրոնի ստեղծում	Կինոլոգիական կենտրոնների շների միջոցով մաքսային զննման առավել արդյունավետ իրականացում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
VI. Այլ մարմինների հետ համագործակցության բարելավում				
32.	Պետական մարմինների միջև, ըստ իրավասությունների շրջանակների, միասնական տեղեկատվական բազայի ձևավորում	Մաքսային բնագավառում ներգրավված մարմինների հետ համագործակցության բարելավում	2013թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
33.	ԵՄ անդամ երկրների մաքսային մարմինների հետ փոխադարձ կապերի հաստատում և ամրապնդում, փորձի փոխանակում, համաժողովների, սեմինարների, կլոր սեղանների	ԵՄ անդամ երկրների մաքսային մարմինների հետ գործընկերային կապերի ընդլայնում, մաքսային գործունեությունը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ)

	կազմակերպում (մասնակցություն)			մարդկային ռեսուրսների ներգրավում
34.	Օտարերկրյա պետությունների մաքսային ծառայությունների հետ համագործակցության ակտիվացում, տեղեկատվության և էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագրերի փոխանակում	Միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
35.	ԵՄ անդամ երկրների մաքսային ծառայությունների հետ տեղեկատվության և էլեկտրոնային կապուղիներով մաքսային հսկողության և վիճակագրության համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակում	ԵՄ անդամ երկրների հետ համագործակցության արդյունավետության բարձրացում	2012թ. և շարունակական	ֆինանսավորում չի պահանջվում
36.	Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմիններին ՀՀ մաքսային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների մասին պարբերաբար տեղեկացում՝ կապված պետական սահմանում մաքսային հսկողության իրականացման հետ	Վրաստանի և Իրանի մաքսային մարմինների հետ համագործակցության բարելավում	2011թ. և շարունակական	ֆինանսավորում չի պահանջվում
VII. Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի կատարելագործում				
37.	Մաքսային և հարկային տեղեկատվական շտեմարանների ինտեգրում և շահագործում՝ ՊԵԿ-ի միասնական գերատեսչական համակարգչային ցանցում	Գերատեսչական համակարգչային ցանցի տեղեկատվական համակարգի ստեղծում, տեղեկատվության հասանելիության ապահովում	2011-2013թթ.	ֆինանսավորում չի պահանջվում

38.	Էլեկտրոնային հայտարարագրման և վճարման համակարգերի ներդրում, գերավճարների հաշվին մաքսային և հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ընթացակարգերի սահմանում, ինչպես նաև դրան ուղղված օրենսդրության համապատասխան փոփոխությունների մշակում	Մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացում	2011թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
39.	ԱյՓի հեռախոսակապի ներդրում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում	Մաքսային մարմնում միջքաղաքային, միջազգային և մայրաքաղաքային զանգերի ծախսերի կրճատում	Ֆինանսավորումից 6 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
40.	Մաքսային ձևակերպումների գործընթացում մաքսային պահեստներից մաքսային բրոքերների կողմից էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագրի ներկայացման համակարգի ընդլայնում	Ինքնահայտարարագրման համակարգի ընդլայնում, մաքսային տեսուչ-հայտարարատու շփումների կրճատում	2011-2012թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
41.	Սահմանային գործառույթներ իրականացնող մարմինների կողմից օգտագործվող տարբեր ծրագրային միջոցները սահմանների կառավարման «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքին բավարարող միասնական էլեկտրոնային կառավարման համակարգով փոխարինում	Կրկնվող գործառույթների բացառում, սահմանային արդյունավետ հսկողության իրականացում	2013թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
42.	Մաքսային իրավախախտումների գրանցման համակարգի կատարելագործում, առավել հաճախ թույլ տրվող սխալների տեղեկատուի ստեղծում	Մաքսային իրավախախտումների հաշվառման գործընթացի բարելավում, իրազեկության մակարդակի բարձրացում	2012թ. և շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
VIII. Մաքսային ծառայության նկատմամբ վստահության ձևավորում				

43.	Մաքսային ծառայողների կողմից կատարված խախտումների դեպքերով ծառայողական քննությունների արդյունավետության բարձրացում և հրապարակայնության ապահովում	Մաքսային ծառայության գործունեության թափանցիկության ապահովում	2011թ. և շարունակական	Ֆինանսավորում չի պահանջվում
44.	Զանգվածային լրատվության կամ գերատեսչական այլ միջոցներով (համացանցի միասնական կայքէջ, տեղեկատվական թերթիկներ և այլն) հասարակությանը մշտապես իրազեկում և ծանոթացում պետական սահմանի անցման կետերում սահմանված ընթացակարգերի, սահմանը հատող անձանց իրավունքների և պարտականությունների, մաքսային պարզեցված ընթացակարգերի վերաբերյալ	Հասարակության շրջանում վստահության մթնոլորտի ձևավորում, մաքսային գործունեության թափանցիկության ապահովում	2011թ. և շարունակական	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում
45.	Մաքսային օրենսդրության փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հետ կապված հարցերով տնտեսվարող սուբյեկտներին պարզաբանումներ ներկայացնելու նպատակով պարբերաբար սեմինարների, կլոբ սեղանների և խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում	Մաքսային օրենսդրության փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում	շարունակական	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
46.	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին օժանդակելուն ուղղված հեռախոսազանգերի ժամանակակից կենտրոնի (Call Center) գործարկում՝ մատուցվող ծառայությունների հետագա կատարելագործմամբ	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների սպասարկման որակի բարձրացում, արագ արձագանքի և հետադարձ կապի ապահովում	2011թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
47.	Մաքսային մարմինների կողմից զանգվածային	Հասարակության և զանգվածային	շարունակական	լրացուցիչ

	լրատվության միջոցների հետ արդյունավետ շփումների ապահովում	լրատվամիջոցների հետ համագործակցության բարելավում		Ֆինանսավորում չի պահանջվում
48.	Էլեկտրոնային մեդիահոլովակների պատրաստում մաքսային ընթացակարգերի մատչելի մատուցման նպատակով, ինչը կներառի պատկերավոր օրինակներ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող առանձին խմբերի համար	Մաքսային ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
IX. Մաքսային ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանվածության ապահովում				
49.	«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների մշակում՝ ուղղված անձնակազմի սոցիալական և իրավական պաշտպանության բարելավմանը	Մաքսային ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության բարելավում	2011-2013թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
50.	Աշխատանքային (շենքային) պայմանների բարելավում, անձնակազմի սոցիալական և նյութական բարելավում, ծառայողական անհրաժեշտ գույքով, տրանսպորտային միջոցներով և տեխնիկայով շարունակական ապահովում	Մաքսային ծառայողների համար աշխատանքային պատշաճ պայմանների ապահովում	2013թ.	միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավում
51.	Մաքսային ծառայողների աշխատանքի վարձատրության և սոցիալական պաշտպանվածության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում	Մաքսային ծառայողների եկամուտների աճ և սոցիալական պաշտպանվածության բարելավում, ինչը նպաստելու է նաև կոռուպցիոն ռիսկերի սահմանափակմանը	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

**ՀՀ Նախագահի աշխատակազմի
ղեկավար**

Կ. Կարապետյան

